ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՈՀՀՍՆ-02/15

ք. Երևան <<19>> հունվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը, ի դեմս Նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Յուքոմ>> ՄՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Եսայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հեռախոսային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Պայմնագիրը կնքելուց հետո ընտրված կիրառելիք իրավունքը հետադարձ ուժ ունի: Սույն Պայմնագիրն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 12-ից և գործում է անժամկետ՝ Կողմերի (այսուհետև՝ Կողմեր) միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ, և ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ կողմերից մեկը գրավոր չի հայտնել այն դադարեցնելու մասին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության --- օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N4 /գնացուցակ/ հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ սփյուռքի նախարարություն	<<Յուքոմ>> ՍՊԸ
ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1	ք. Երևան Տերյան 19, բն 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ
Հ/Հ 900011039048 Հ/Հ 900011039030	Հ/Հ 001264993001
ՀՎՀՀ 02705838	ՀՎՀՀ 00024873
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ .S	Կ.S.

Հավելված 1

<<19>> հունվարի 2015թ. կնքված ՀՀՀՄՆ-02/15

ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության տեսակ	Հեռախոսահամարների քանակ
Հիմնական հեռախոսագիծ Կորպորատիվ փաթեթի շրջանակներում	20 *
Միանվագ վճարումներ	ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ
Հեռախոսագծի ակտիվացում*	0
Ամսական վճարումներ	ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ
Ամսական Բաժանորդավճար	1500
Անվճար րոպեներ	րոպե
Դեպի ՀՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր(010, 011, 060)	360
Րոպեավճար	ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ /րոպե
Դեպի ՀՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր (010, 011, 060)	4
Դեպի ՀՀ բջջային ցանցեր	18
Դեպի ԼՂՀ բջջային ցանցեր	28
Զանգեր դեպի ՀՀ այլ ֆիքսված հեռախոսային ցանցեր	14
Դեպի ԼՂՀ քաղաքային ցանցեր	18
Սկիզբ՝ հունվար 2015թ.	

*060/U!Phone Corporate Special GEO 360.

1. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500305,
2. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500310,
3. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500320,
4. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500610,
5. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500620,
6. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500630
7. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500710,
8. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500720
9. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500730,
10. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500810,
11. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500820,
12. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500830,
13. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500910,
14. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500920,
15. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500930,
16. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500301,
17. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500302,
18. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500530,

19. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500520.

20. U!Phone Corporate Special GEO 360, Հեռ. համար N: 060500304

Ֆիքսված հեռախոսակապի ծառայության ամսավճարը սկսում է հաշվարկվել ծառայությունների ակտիվացմանը հաջորդող օրվանից:

Ֆիքսված հեռախոսակապի ծառայության դիմաց վճարման եղանակը հետվճարային է:

Հեռախոսահամարները, անկախ դասակարգումից, տրամադրվում են անվճար:

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ սփյուռքի նախարարություն	<<Յուքոմ>> ՍՊԸ
ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1	ք. Երևան Տերյան 19, բն 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ
Հ/Հ 900011039048 Հ/Հ 900011039030	Հ/Հ 001264993001
ՀՎՀՀ 02705838	ՀՎՀՀ 00024873
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ .Տ	Կ.Տ.

Հավելված 4

<<19>> հունվարի 2015թ. կնքված ՆՀՀՍՆ-02/15

ծածկագրով գնման պայմանագրի

ՄԻՋԱԶԳԱՅԻՆՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԳՆԱՑՈՒՑԱԿ

ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների պայմանները

SIP- IP Համակարգ **

Այս համակարգը հնարավորություն է ընձեռում՝

օգտագործել տեսազանգի հնարավորությունները***,

օգտագործել հեռախոսազանգերի ձայնագրման հնարավորությունները,

մեկ հեռախոսահամարը օգտագործել մի քանի աշխատակիցների, կամ թեժ գծի կամ զանգերի կենտրոնի կողմից,

ունենալ մեկ սերվեր գլխամասում, որից կարող են օգտվել Յուքոմ ցանցին միացած, կամ ինտերնետ կապ ունեցող բոլոր մասնաճյուղերը:

Այս համակարգին անցման համար հարկավոր է առանձնացված հեռախոսային սերվեր և IP Հեռախոսներ, ինչպես նաև պետք է իրականացնել սերվերի կարգաբերման աշխատանքներ:

Մեկ հեռախոսահամարի ամսական սպասարկման վճար – 1500 ՀՀԴ՝ ներառում է 360 անվճար րոպե քաղաքային ցանցում

Զանգեր Ucom ցանցի ներսում - 4 դր./րոպե

Զանգեր դեպի այլ տեղական ֆիքսված հեռախոսային ցանցեր - 4 դր./րոպե

Զանգեր դեպի ՀՀ Բջջային ցանցեր - 18 դր./րոպե

Միջքաղաքային զանգեր դեպի ՀՀ քաղաքային ցանցեր - 14 դր./րոպե

*** SIP ATC -ի ներդրման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները, որոնց ծախսերը ՅՈՒՔՈՄ ՍՊԸ-ն կվերցնի իր վրա

- Ներքին RG 45 (UTP) մալուխների անցկացում (սերվերից մինչ հեռախոսները) 15 կետ
- Հեռախոսային վիրտուալ սերվեր – 1 հատ
- Հեռախոսներ, կամ համակարգչային սարքավորումներ և Soft Phone -15 հատ

	Քաղաքային 011, 010, 060	ՀՀ մարզեր (ֆիքս.)	ՀՀ Բջջ.	ԼՂՀ (բջջ)	ԼՂՀ (ֆիքս.)
060	4դր	14դր	18դր	28դր	18դր

Միջազգային – զանգերի սակագները Premium**** որակի

http://www.ucom.am/hy/uPhoneConnect.html

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ սփյուռքի նախարարություն

ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011039048 Հ/Հ 900011039030

ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)

Կ .Տ

Կ ա տ ա ր ո ղ

<<Յուքոմ>> ՍՊԸ

ք. Երևան Տերյան 19, բն 4

Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ

Հ/Հ 001264993001

ՀՎՀՀ 00024873

(ստորագրություն)

Կ.Տ.